

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՒՆԵՐԱ

ԵՐՈՒԱՆԴԻ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Այն տեսակ սարափահար ժողովրդական դժբաղդութիւնները, ինչպէս են սովոր, ժանտախտը, խոլերան—մարդոց ակամայ ստիպում են, առ-ժամանակ դռնէ, մոռանալ իրանց սեպհական դրաղմունքները, իրանց կեանքի հոգսերը՝ և մտածել ուրիշների վրայ: Այդ ժամանակաւոր ինքնա-մոռացութեան հետեանքն այն է լինում, որ հասարակութեան մէջ ապրող և կեանքի բոլոր երջանկութիւնները մշտապէս վալկող «արտոնացեալ» դասակարգը՝ համարեա անդիտակցօրէն՝ բաց է անում իւր փողի տոպրակը և սկսում է բարեգործութիւնով զբաղուիլ: Դեռ ևս չարունակում է Ռուսաստանի սովոր, դեռ ևս կալսութեան ամեն կողմից աշխատում են օգ-նութեան ձեռք կարկառել Ռուսաստանի խեղճ գիւղացուն սովամահ լինե-լուց ազատելու համար,—և լանկարծ կողկատում լալտնում է մի նոր հրէշ, մի նոր ժողովրդական աղէտ—խոլերան, որ սպառնում է տարածել ամբողջ Ռուսաստանում և, մէկ դժբաղդութեան վրայ աւելացնելով մի ուրիշը, աւելի սոսկային՝ ժողովրդի տանջանքների զարհուրելի բաժակը լցնելու է մինչև պռունկները... Շատ էլ զգալուն սրտի տէր չը պէտք է լինել՝ այս հանդամանքներում խեղճների դրութիւնն զգալու, հասկանալու համար: Սովի, խոլերայի և առհասարակ ժողովրդական մեծ դժբաղդութիւնների փրկութիւն կարծես մի դիւթական դաւադանի հարածով պատահում է այն սառնութեան և անտարբերութեան հաստ վարագողը, որ սովորաբար ծածկում է բաղդաւորների աչքերից միլիօնաւոր թշուառների կեանքը իւր բոլոր ողբալի մերկութեամբ: Կեանքի խաղաղ և առօրեալ պայմաններում, երբ չը կա բարձրաձայն գոռացող և աղաղակող չարիք, երբ մարդիկ հնա-գանդ «ձակատագրի» անողոք որոյմանը, ապրում և մի կերպ քաշ են տա-լիս իրանց ողորմելի գոլութիւնը—այդ տեսակ, ըստ երևութին՝ բնական պայմաններում, մարդոց մէջ չի լինում ոչ խիղճ, ոչ կարեկցութիւն և ոչ ուրիշի ցաւերը հասկանալու ընդունակութիւն: Խմ ասածը չափազանցու-թիւն չէ. «գոլութեան կռիւ» կոչող բնագիտական տերմինը, իւր ալփմեան

հասարակական մտքով, ենթադրում է մարդոց մէջ թէ անհատական և թէ դասակարգային սարսափելի եսականութիւն: Ուշադրութեամբ դիտեցէք մարդոց առօրեայ կեանքը, հետեցէք նրանց ապրուստի պայմանների գլխաւոր, դեկլարող մօտիւններին, ուսումնասիրեցէք թէ անհատների և թէ դանադան դասակարգերի փոխադարձ տնտեսական լարարերութիւնները—և դո՛ք սարսափով կը նկատէք, թէ որ աստիճան եսական է ալժմեան մարդկութիւնը, թէ որպիսի գաղանակն կուլ է մղում հասարակութեան մէջ իւրաքանչիւր անհատ և իւրաքանչիւր դասակարգ՝ իւր սեռական շահերը, իւր սեպական կեանքի բարեխառնութիւնն ու լարմարութիւնները պաշտպանելու համար: Ամեն ոք իւր վրայ է մտածում, ամեն ոք «իւր կողմն է քաշում»—ինչպէս ասում է մեր ժողովուրդը: Ֆրանսիացի նշանաւոր մտածող Եարլ Լետուրնօ, իւր «Evolution de la morale» անունով շարադրութեան մէջ, մեր ալժմեան կեանքի ընդհանուր բարոյական գոնը որոշում է հետեւեալ կերպով. «բարոյականութեան սկզբունքները, օրէնքի, ճշմարտութեան գաղափարները—լոկ խօսքեր են մեր ժամանակում: Նրանք շարունակ դուրս են գալիս մարդկանց բնաւից, առանց գործնական մի հետեւանքի, առանց իրականապէս երևալու՝ մեր ամեն գործերի և վարմունքների մէջ: Ասել մի կերպ և գործել ուրիշ կերպ—ահա մեր ժամանակի մտղկանց սկզբունքը»: Նորն շարադրութեան մէջ մի ուրիշ տեղ՝ Լետուրնօ հետեւեալ միտքն է փայտնում մեր ժամանակի տնտեսական-հասարակական պայմանների առթիւ. «Տնտեսական և սոցիալական անկարգութիւնները բարձրաձայն խօսում, ըողոքում են ամեն տեղ: Արդիւնաբերական և վաճառականական ոգին աւելի և աւելի տարածելով փչացնում, վարակում է մարկանց բարոյական զգացմունքները: Մարդը կատարեալ ստորակ է իւր շահագիտական կրքերի առաջ: Նա ոչ թէ տիրում, կառավարում է բնութեան հարստութիւնները, այլ ընդհակառակ՝ հարստութիւնը, ոսկին ու արծաթն իշխում, կառավարում են մարդու հոգին, նրա մտաւոր և բարոյական ընդունակութիւնները: Վարձկանութիւնը, փողի, կապիտալի ծառայելը մի նոր տնտեսական ախտ է, որ առաջ է բերում ժամանակիս տիրապետող հասարակական հիւանդութիւնը—անդործ պրոլետարիատ: Աղքատների և պարսպ մնացած աշխատաւորների թիւը օր աւուր աւելանում է, շատանում է արդէն: Հասարակ ժողովուրդը, ահագին միլիոններով՝ հալւում, մաշւում է դառն աղքատութեան ճանկերում... Տգիտութիւնն ու անասնական անբարոյականութիւնը, ծանր չերտով ճնշում են ժողովրդի միտքն ու հոգին...» Ե. Լետուրնօի վերոյիշեալ մտքերն ալրող ճշմարտութիւններ են պարունակում իրանց մէջ, և ես համոզւած եմ, որ ընթերցողը մի բոպէ անգամ չի կասկածելու դրանում: Այո... Եւ այդ ճշմարտութիւնների ամբողջ ողբերգական իրականութիւնը մարդոց առջև երևում, շօշափելի է դառնում այն ժամանակ, երբ կեանքի տնտեսական և սոցիալական անկարգութիւններն առաջացնում

ձնն սով, խոլերա, ժանտախտ... Ինչո՞ւ սովի ժամանակ գլուղացին է քաղցից մեռնում, ինչո՞ւ խոլերան և ժանտախտը կոտորում են հասարակութեան ստորին—բանաւոր և մշակ դասակարգը... «Պարիզում խոլերայի ժամանակ» — ասում է իմ ծանօթ բժիշկ Լ. — «մեռնողները միայն հասարակ դասակարգի մարդիկ էին, իսկ հարուստ և ապահով դասակարգը՝ չէր մեռնում: Բազուկից եկած լուրերը միանգամայն հաստատում են, որ խոլերան ջարդում է մշակներին, համայնքներին, իսկ ապահով մարդիկ, կամ փախչում են քաղաքից, կամ թէ՛ չէ՛ ամեն տեսակ լալմարութիւններով չըջապատում են իրանց և ոչ մի խոլերա նրանց չի համարձակւի մօտենալ... Նրանք կամ բոլորովին չեն վարակւում, կամ թէ՛ որ վարակւում են՝ — կարողանում են ազատել մեռնելուց: Ինչո՞ւմն է սրա գաղտնիքը, Նոյն բանը պատահում է և բոլոր պատուհանների ժամանակ. սովի, խոլերայի, ժանտախտի և այլ տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ:

Բազուկից եկած մի երիտասարդ՝ հետեւեալ դէպքն է պատմում ահտեղի հարուստ գործարանատէրերի կեանքից. «Տուգերից» մէկը, որ լսում է խոլերայի դէպքերի մասին Բազուկ, սատտիկ վրդովւած հարց ու փորձ է անում իւր բարեկամներին ու ծանօթներին, թէ ովքեր են խոլերայից վարակւողներն ու մեռնողները: Նրա ծանօթներից մէկը հաւատացնում է նրան, որ հիւանդացող և մեռնողները միայն մշակ, բանւոր դասակարգին պատկանողներն են... Հարուստ գործարանատիրոջ ուրախութեանը չափ չէ եղել՝ ալդ տեղեկութիւնը լսելուց վստու, և նա ահուհետե սկսել է միայն հոգ տանել ալն մասին թէ՛ ինչ կը լինի գործարանատէրերի դրութիւնը, եթէ Բազուկ բոլոր մշակներն ու բանւորները խոլերայից մեռնեն:

Տնտեսական խորը և անհաշտելի անտաղտնիքով, որ ալնպէս խիստ կերպով բաժանել, հեռացրել է միմեանցից հասարակութեան երկու դասակարգերը՝ սպառող փոքրամասնութիւնը և արդիւնաբերող ահալին մեծամասնութիւնը, ալդ տնտեսական անարդար և հակամարդկալին անտաղտնիքով իւր ազդեցութեան անջնջելի կնիքը դրել է վիշալ երկու դասակարգերի միայ: Եւ ալդ անտաղտնիքն աւելի խոր, աւելի ալք ծակող է Բազուկ նման արդիւնաբերական կենդրոններում: Ներկայումս ամեն տեղ տիրապետող փողատիրական արդիւնաբերութիւնը, որով հարուստ փողատէրը, կամ կապիտալիստը իւր փողի շնորհիւ կարողանում է ստրկացնել հազարաւոր աշխատող ձեռքեր, հարստահարելով նրանց իւր օգտին, ծառայեցնելով նրանց իւր ունեցած փողին — ալդ արդիւնաբերական սխտեմը ոչ միայն տնտեսապէս քաջքալում, աւելում է աշխատաւոր ամբոխի կեանքն ու ապրուստը, ալ և հասցնում է նրան ամենաստոր բարոյական դրութեան: Բազուկ գործարանատէր աղան, որ սովոր է ամենալն օր տնտնել իւր ձեռքի տակ բազմաթիւ մարդկալին կերպարանքների, որոնք ցնցոտիներով պատած, բոկոտն և գլխաբաց աշխատում են նրա գործարանում օրական չոր հացի համար, որոնց կեանքը, գոլութիւնը

ճակատագրական կերպով կապած է աղալի հետ, նրա գործարանի, նրա կոպէկների հետ,—այդ աղան, օգտւելով իւր բանւորների ֆիզիկական ուժից, միևնույն ժամանակ լցում է խորը արհամարական զգացմունքով դէպի իրան հարստացնող, իւր գործն առաջ տանող բանւոր մշակները, Հարստութեան, փողի տեսակէտը, որից գործարանատէր հարուստը նախում է մշակների, բանւորների և արհեստաւորների վրա՝ սպառիկ ստորացում է նրա աչքում ամեն գործունէութիւն, ամեն տեսակ պարագմունք, որ շատ հարստութիւն, շատ փող չի տալիս մարդուն։ Փողի, կապիտալի տեսակէտից, բանւորն աչքքան ստոր, աչքքան չնչին է համեմատելով իւր աղալի հետ, որքան որ նրա ստացած օրական «գինտալիկը» քիչ է աղալի օրական ստացած օգուտից։ Եւ եթէ, օրինակի համար՝ ենթադրենք, որ մշակը իւր աշխատութեան համար օրական հարիւր անգամ քիչ փող է վաստակում քան թէ նրա գործարանատէրը, ուրեմն փողի բարոյականութեան տեսակէտից՝ գործարանատէր աղան, իբրեւ մարդ, հարիւր անգամ աւելի բարձր է, քան թէ նրա գործարանում աշխատող մշակը, կամ բանւորը... Այս փողի բարոյականութեան տեսակէտը միակ չափն է, որով ներկայ արդիւնաբերական և վաճառականական աշխարհում զնահաւում են մարդկային անհատները։ Այդ նույն զնահատութեան չափը, նույն փողի բարոյականութեան տեսակէտն ընդհանրացած է ներկայումս և բոլոր միւս հասարակական դասակարգերի մէջ։ Ապալիսով առաջացել է արդի հասարակութեան մէջ փողի, հարստութեան զեւիզը, որ զեւեցիկ կերպով արտաբերւում է թիֆլիսցի հալ վաճառականի խօսքերով. «առանց փող—դիւի մէ գրող»։ Ամեն մարդ աշխատում է՝ հարստութիւն դիզել։ Եւ այդ փող աշխատելու ընդհանուր տենդային ձգտման մէջ—վսկ նրան ով որ ընդունակ չէ մրցելու, վսկ նրան ով որ չունի աչն ճարպիկութիւնը, դիւրաթեքութիւնն ու աչքաքացութիւնը, ինչ որ անհրաժեշտ է ամեն մի վաճառականական—արդիւնաբերական գործի մէջ աջողակ լինելու համար։ Փող դատելու, հարստանալու ձգտման մէջ՝ ամենից թուլ, ամենից անընդունակ և լետ ընկած դասակարգը—մշակները, բանւորները, արհեստաւորներն ու գիւղացիներն են, որոնք, ընդհանուր անունով կոչւում են «հասարակ դասակարգ»։ Այդ հասարակ դասակարգն է, որ զուրկ է թէ փողից, թէ խելքից և թէ գիտութիւնից, այդ դասակարգն է, որ իւր ծաւրախող աղքատութեան պատճառով դատապարտւած են ընդհանուր հասարակական ամեն տեսակ ճնշումներին ու զրկանքներին։ Հասարակ դասակարգի ապրուստը, նրա նիստ ու կացը, նրա մտաւոր-բարոյական աշխարհն աչնպէս սարսափելի կերպով տարբերւում են միւս՝ հարուստ դասակարգի կեանքից և սովորութիւններից, որ ես ավելորդ եմ համարում անգամ համեմատութիւն անել ալտոնդ և դուրս բերել նրանց ծաւրախող հակապատկերները... Միայն ես ուզում եմ ընթերցողի ուշադրութիւնը դարձնել աչն հանգամանքի վրա, որ հասարակ դասակարգը, իւր չքաւորութեան և

աղիտութեան պատճառով, ալնքան թուլ, անդօր և անպաշտպան է կեանքի մէջ, նրա ապրուստի բոլոր պայմաններն ալնպէս վնասակար են աղղում նրա թէ մարմնի և թէ հոգու վրա, որ բաւական է մի թեթև ընական անկարմարութիւն—մի երաշտութիւն—և հասարակ դասակարգը սովամահ է լինելու, մի օրինակ խոլերալի—և հասարակ դասակարգը տասնեակներով հարիւրներով վարակւած, մեռնում է խոլերալից, Բանտրների, մշակների, արհեստաւորների և դիւղացիների անպաշտպան, նւաղած ու չարչարած կեանքը սաստիկ տրամադրւած է ընդունելու, զարգացնելու իւր մէջ ամեն տեսակ հասարակական ակտեր, ամեն տեսակ թէ բարոյական և թէ ֆիզիկական էպիդեմիաներ, ինչու խոլերան ջարդում է Բագլի հասարակ դասակարգը—որովհետև հասարակ դասակարգի կեանքը թէ աղքատութեան և թէ աղիտութեան կողմից՝ ամենալու միջոց է խոլերալի զարգանալու համար, ի հարկէ ալժմ, երբ խոլերալի սարսափն ամեն տեղ տարածւած է, երբ հարկաւոր է ուղղակի հիւանդութեան դէմ կռւել,—ալժմ անհրաժեշտ են ամեն տեսակ բժշկական—դեղինֆեկցիական միջոցներ, Բալց չարիքի դէմ առնելու իսկական միջոցը՝ դեղինֆեկցիան խօ չէ, չարիքի դէմ առնելու իսկական միջոցն ալն մասնաւոր զոռչութեան կանոններն էլ չեն, որոնցով ալժմ լցւած են Թիֆլիզի լրագիրները, խոլերալի դէմ կռւելու և վարակւելուց ազատ մնալու համար՝ Թիֆլիզի մամուլը խորհուրդ է տալիս հասարակութեանը վերին աստիճան մանրակրկիտ առողջապահական խրատներ—մաքուր ուտել, մաքուր հագնւել, տոճ-տեղը չափազանց խտակ պահել, հում ջրի տեղ՝ թէլ խմել, ճաշի վրա կարմիր գինի դրժածել, բոլոր ուտելիղէշներն ամանները դեղինֆեկցիալի ենթարկել, հացը և միւս ուտելիքները ապակէ զանգակի տակ պահել... և ալն և ալն, Բալց ռւմ համար են տալում ալն խրատները,—ի հարկէ ոչ ամբողջ համար, Ամբոխն ալ խրատներից ոչ մէկը չի կարող հասկանալ և կատարել, Շատ հնչտ բան է ասել՝ մաքուր ուտել, մաքուր հագնւել, Միջոց ոճնցող հարուստներն առանց խոլերալից վախենալու էլ՝ մաքուր ու սննդարար կերակուրներ են ուտում, չաբաթը մի անգամ բազանիք են գնում, ձինի նման մաքուր սպիտակեղէն են հագնում և սաստիկ խտակ, ամենափառաւոր դահլիճներում, կարինետներում և ճնջարաններումն են ապրում, Եւ հէնց ալ չէ պատճառը որ խոլերան նրանց տանը չի մօտենում, իսկ աղքատ մշակներին, բանտրներին, արհեստաւորներին խորհուրդ տալ՝ մաքուր ուտել, մաքուր հագնւել, կոնեակով սուրճ խմել...—ճշմարիտ՝ ծիղաղելի է, և մի դառն հեգնութիւն է նրանց աղքատութեան, թշուառութեան վրա, իսկ խոլերալով հիւանդացող և մեռնողները՝ մշակներն են, համալները, բանտրները, արհեստաւորներն են,—մի խօսքով՝ ամբողջ աղքատ դասակարգը, Եւ եթէ դիտութեան և հարստութեան բարիքը վալեղող արտոնացեալ դասակարգը հասկացել է, որ մաքուր ուտել և խմել, մաքուր հագնւել և առհասարակ մարդավալի կեանք վարելն անհրաժեշտ պալ-

մաններ են՝ խոլերայից չը վարակելու համար,— թող ուրեմն ալի միջոցը տան բոլոր խեղճերին և կարօտեալներին. թող միջոց տան՝ ցեխի և ապականութեան մէջ՝ քաղցածութիւնից և անտանելի կարիքից տանջողներին՝ մարդավախ կեանք վարել,— մարդավախ սննդարար կերակուր ուտել, մաքուր հագուստ և սպիտակեղէն ունենալ. ժողովրդի ծալալից տնտեսական անապահով դրութիւնը՝ թող գոնէ այս տեսակ տագնապալի դրութիւններով՝ բարձր դասակարգի, հարուստների և գիտունների ուշադրութեան առարկալ լինի. Օգնեցէք ժողովրդին գոնէ այն ժամանակ՝ երբ նա կոտորուով է ճանճի պէս, օգնեցէք իրական, կենսական, տնտեսական միջոցներով— և ալի օգնութեան եղանակը գոցէ մի դաս լինի մեզ համար, ապագայով ևս, աղէտներից և համաճարակ հիւանդութիւններից լետու էլ՝ մտածելու ամբոխի տնտեսական դրութեան վրայ, ալի մոռացած և ոտքի տակ գնացած ամբոխի, որ, ալսպէս թէ ալնպէս, զո՛հ է դառել մեր երջանկութեան, մեր մտաւոր ու ֆիզիկական բարեւատութեան շահերին,